ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N 2/փ - 347

հերթական համարը

ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի

ՀՀ Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնքը (Նոյեմբերյան քաղաքը) ներառող միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթի փոփոխության վերաբերյալ

(Նոյեմբերյան համայնքի (Նոյեմբերյան քաղաքի) գոտևորման նախագծի մասով)

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշման 13-րդ և 49-րդ կետերի պահանջներով.

1. Հանձնաժողովը տալիս է դրական եզրակացություն՝

ՀՀ Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնքը (Նոյեմբերյան քաղաքը) ներառող միկրոռեգիոնալ մակարդակի Տավուշ-1 համակցված տարածական պլանավորման փաստաթղթի փոփոխությանը՝

ՀՀ Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնքի (Նոյեմբերյան քաղաքի) Հողամասի մակերեսը, ծածկագիրը կամ հասցեն, առկա նպատակային և գործառնական նշանակությունը	Փոփոխությունից հետո հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը
11-004-0286-0164 կադաստրային ծածկագրով 0.18842 հա և 0.04044 հա մակերեսներով /ընդհանուր 0.22886 հա/ գյուղատնտեսական նպատակային նշանակության վարելահողեր	11-004-0286-0164 կադաստրային ծածկագրով 0.18842 հա և 0.04044 հա մակերեսներով /ընդհանուր 0.22886 հա/ անտառային հողեր
11-004-0286-0149 կադաստրային ծածկագրով 0.07455 հա և 11-004-0286-0150 կադաստրային ծածկագրով 0.15431 հա մակերեսներով /ընդհանուր 0.22886 հա/ անտառային հողեր	11-004-0286-0149 կադաստրային ծածկագրով 0.07455 հա և 11-004-0286-0150 կադաստրային ծածկագրով 0.15431 հա մակերեսներով /ընդհանուր 0.22886 հա/ գյուղատնտեսական նպատակային նշանակության վարելահողեր
11-004-0286-0164 կադաստրային ծածկագրով 1.77873 հա մակերեսով հողամասից 0.14 հա մակերեսով հողամասը գյուղատնտեսական նպատակային նշանակության վարելահողեր	11-004-0286-0164 կադաստրային ծածկագրով 1.77873 հա մակերեսով հողամասից 0.14 հա մակերեսով հողամասը բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման հողեր

2. Կառուցապատման հետագա գործառույթներն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան, մասնավորապես ապահովելով՝ ՀՀՇՆ 30-01-2023 «Քաղաքաշինություն. քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերի պահանջները:

3. Հետագա գործառույթներն անհրաժեշտ է իրականցնել հաշվի առնելով ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի և ՀՀ շրջակա միջավայրի նախարարությունների և ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կողմից ներկայացված պահանջները (կցվում են):

4. Նոյեմբերյան համայնքի ղեկավարին առաջարկվում է նշված փոփոխություններն արտացոլել Նոյեմբերյան քաղաքի ընթացիկ քաղաքաշինական քարտեզում,

- ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել ՀՀ Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնքի (Նոյեմբերյան քաղաքի) հաստատված գոտևորման նախագծում սույն որոշումից բխող փոփոխությունները:

Հանձնաժողովի նախագահ՝	
	Ե.Վարդանյան
Հանձնաժողովի քարտուղար՝	
	Լ.Առաքելյան

Երևան, «21» «հոկտեմբերի» 2025 թ.